

ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՏ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ

Թիւրքիան մի այնպիսի երկիր է, որ իր աշխարհագրական դիրքի և պայմանների շնորհով գրաւել է ամբողջ Եւրոպայի ու շաղրութիւնը: Թիւրքիան պատմական հանգամանքների զօրութեամբ ներկայացնում է մի քաղաքական մարմին, որի գոյութեան խնդիրը նշանաւոր տեղ է բռնում եւրոպական քաղաքականութեան խնդիրների շարքում: Եւրոպան կապած է նորա հետ գլխաւորապէս տնտեսական շահերով. և այդ երկիրը շատ է կախւած Եւրոպայից, որպէս զի նա կարողանայ առանց Եւրոպայի օգնութեան կամ գործակցութեան իր երկրի մէջ մի որ և է վերանորոգման գործին ձեռնարկել: Միւս կողմից քաղաքակրթութեան շահերը պահանջում են, որ Եւրոպան միջամտի թրքական այն խնդիրների մէջ, որոնք վերաբերում են երկրի տնտեսական և հասարակական վերանորոգմանը: Թիւրքիայում բնակւում են զանազան քրիստոնեայ ազգեր, որոնց շարքում հայերը կազմում են մի զգալի տոկոս: Բնական է, որ իւրաքանչիւր վերանորոգման խնդիր, լինի սա տնտեսական թէ հասարակական, վերաբերում է նոյնպէս հայերի վիճակին: Հայ ընթերցողի համար հետաքրքրական է իմանալ Թիւրքիայի տնտեսական և հասարակական այն վիճելի խնդրի դրութիւնը, որի բարեյաջող լուծումը պէտք է փոխի իշխող հասարակական և իրաւական կարգերը, որոնց գոյութիւնը այլ ևս անժամանակակից և անգամ ֆնասակար է ճանաչւում: Խօսքս վերաբերում է Տաճկաստանի հողատիրութեան կազմակերպութեանը:

Թիւրքիան ասիական երկիր է բառիս բուն նշանակութեամբ:

Շնորհիւ իր այդ բնաւորութեանը, նա մնացել է մինչ այժմս էլ հասարակական կազմակերպութեան շատ խնդիրներում անշարժ դրութեան մէջ: Հողատիրութեան վերաբերմամբ Թիւրքիան նոյն պատկերն է ներկայացնում, որ գոյութիւն ունէր սորանից չորս հարիւր տարի առաջ: Պատմութեան ընթացքում բոլոր արեւմտեան երկիրներում հողատիրութեան ձեւերը ենթարկւել են աստիճանական փոփոխութեան: Այնտեղ երբ փոխւել են անհատների կացութեան պայմանները, փոխւել են նոյնպէս նոցա իրաւական յարաբերութիւնները դէպի հողատիրութիւնը: Հետեւաբար անհատական կացութեան և հողատիրութեան ձեւափոխութիւնները ընթացել են զուգահեռաբար: Միևնոյն երևոյթը տեղի չէ ունեցել Թիւրքիայի տնտեսական և հասարակական պատմութեան մէջ: Եւ եթէ Թիւրքիան այդ տեսակէտից յետամնաց է և շարունակում է դարձեալ անշարժ մնալ, դորա գլխաւոր պատճառը կայանում է այդ երկրում իշխող կրօնական աշխարհայեցողութեան մէջ: Կրօնի ազդեցութիւնը արտափայլում է տաճիկների թէ հասարակական կեանքի և թէ նամանաւանդ օրէնսդրութեան վրայ: Այնպէս որ Թիւրքաց օրէնսդրութիւնը, հաւատարիմ մնալով կրօնական կանոններին, հակառակում է ամեն մի յառաջադիմութեան գործին:

Այսպէս 70-ական և 80-ական թւականներին Թիւրքաց օրէնսդրութիւնը փորձեր է արել հողատիրութեան մէջ փոփոխումներ մտցնելու: Բայց այդ փորձերը անյաջող էին, որովհետև օրէնքը Թիւրքիայում մեռած տարր է մնում, եթէ սորան գործ զննելու համար մի արտաքոյ կարգի զարկ չէ արւում: Իսկ է՝ եւրոպական տէրութիւնների միջամտութեամբ միայն այդ փորձերը արեցին: Այնու ամենայնիւ սոցա միջամտութիւնը զօրեղ և խստապահանջ չէր, որպէս զի Տաճկաստանը իրան միանգամայն ստիպւած համարէր՝ յայտնած պահանջներին բաւարարութիւն տալու: Մենք ստորև կը խօսենք այդ օրէնսդրական փորձերի մասին: Դորանից առաջ մենք հարկաւոր ենք համարում համառօտապէս նկարագրել Թիւրքիայում գոյութիւն ունեցող հողատիրութեան ձեւերը:

Թիւրքիայում հողերը ի հնուց բաժանւած են երեք կարգերի: Առաջին կարգի հողերը եկեղեցական են (մզկիթներին). երկրորդ կարգին պատկանում են մասնաւոր հողերը (միւլք). երրորդ կարգի

հողերը կազմում են տէրունական սեպհականութիւն: Իսկապէս բոլոր հողերը համարոււմ են, ըստ թուրքաց հասկացողութեանը՝ տէրունական սեպհականութիւն: Եկեղեցիներին և մասնաւոր մարդկանց տրւած է միայն հողերից օգուելու իրաւունք— ուրիշ խօսքերով հողերին տիրանալու իրաւունք՝ միայն զոցանից օգուտներ քաղելու նպատակով: Այսպիսի մի հասկացողութիւն ծագել է շնորհիւ այն պատմական պայմանների, որոնց մէջ կազմել է թիւրքաց պետութիւնը: Այդ պետութեան կազմակերպութեան հիմքը եղել է նւաճումն: Նւաճելով երկիրներ և ի մի միացնելով սոցա՝ թիւրքաց պետութիւնը իւրացրել է զոցա բացարձակ սեպհականութեան իրաւունքը:

Մասնաւոր հողատիրութիւնը (միւլք) վայելում է ազատ ծախւելու իրաւունքը: Թէև մասնաւոր հողատէրերը սեպհականութեան իրաւունք ունեն իրանց հողերի վրայ, բայց այդ իրաւունքը սահմանափակոււմ է նրանով, որ այլ և այլ հաստատութիւններ նիւթական օգուտ են քաղում այդ մասնաւոր սեպհականութիւնից: Մասնաւոր հողերի մէջ դարձեալ պէտք է զանազանել երկու տեսակ հողեր: Առաջին տեսակիցն են մահմեդականների մասնաւոր հողերը, իսկ երկրորդ տեսակիցն են քրիստոնեաների մասնաւոր հողերը: Այդ բաժանմունքը յառաջացել է այն կրօնական գաղափարից թէ բոլոր հողերը առանց խտրութեան պատկանում են իսլամին: Իսկ մահմեդական մասնաւոր հողատէրերը վճարում են հողային հարկ այն է բերքի տասանորդը: Քրիստոնեայ մասնաւոր հողատէրերը ենթակայ են այլ տեսակ հողային հարկատուութեան: Սոցանից պետութիւնը վերցնում է հողային հարկ իր որոշմամբ: Այս հարկը հասնում է շատ տեղերում մինչ 50% հողի արդիւնքի: Բայց և շատ ուրիշ տեղերում հողային հարկը մի որոշած գումար է, որ անփոփոխ է մնում: Ժամանակի ընթացքում այս անփոփոխ հողային հարկը ստացել է զինւորական հարկի բնաւորութիւն և վերցնոււմ է նոյնպէս այն քրիստոնեաներից, որոնք հողատէր չեն: Այս տեսակ նախապէս որոշած հարկատուութիւնը, որ մերթ հողային և մերթ զինւորական է, շատ հասարակ և դիւրին է՝ հարկ ժողովելու նպատակների համար, սակայն նա անարդար է և միայն յատուկ է տնտեսապէս յետամնաց երկիրներին: Ի հարկէ

այն տեղերում, ուր հողագործները հողի մշակութեան համար կանխաւ փող չեն մտնում, ուր հողի մշակութեան ձևերը կոպիտ և նախնական են, ուր շուկաների հաղորդակցութեան միջոցները պակասում են, ուր մի խօսքով հողերի շատութեան պատճառով՝ երկրագործութիւնը ընդարձակ է, — այդպիսի երկիրներում բերքով տրեւիլը հողային հարկը վերցիշեալ ձևով գուցէ մի յայտնի չափով ասնելի է: Այսու ամենայնիւ նոյն իսկ յետամնաց երկիրներում այդ տեսակ հարկի կազմակերպութիւնը շատ անարդար է: Եւ ահա թէ ինչու. միանգամից որոշած անփոփոխ հողային հարկը ի նկատի չի աւնում այն հանգամանքը, որ հողերը ապիս են արդիւնք զանազան քանակութեամբ: Թէ քիչ և թէ շատ արդիւնք տւող հողերը ապիս են մի տեսակ հարկ: Բացի սրանից ուշք չէ դարձնւում հողերի մշակութեան զանազան տեսակների վրայ: Զէ որ հողատէրերից շատերը միայն ցորեն են արտադրում և շատերը այնպիսի երկրագործական արդիւնքներ են արտադրում ինչպէս քաւամ, վուշ (կտաւհատ) և այլն, որոնց մշակութեան համար պահանջւում է աւելի շատ աշխատանք և կանխիկ փող: Հետեւաբար այդ արդիւնքներն արտադրող հողատէրերը չեն կարող առաջուց որոշած հարկ տալ: Սոցա վրայ դնւող հարկը պէտքէ յամենայն դէպս բերքից յետոյ որոշելի: Իսկ տալով նախապէս որոշած հողային հարկը հում բերքից, կարող է պատահել, որ այդ հողատէրերին շատ քիչ բան մնայ: Թիւրքիայում նոյն իսկ վատ հունձքի ժամանակ հարկատուութեան պայմանները մնում են միեւնոյնը: Երբոր մի երկրում բերքը սակաւ է, յայտնի է, որ ցորենի դինը բարձրանում է: Տէրութիւնը վերցնելով միեւնոյն չափով հողային հարկը բերքով՝ քաղում է աւելի մեծ օգուտներ քան սովորական ժամանակները, այնպէս որ երկիրը այնքան աւելի է ծանրաբեռնւում, որքան նա սովորականից աւելի թշւառ է լինում վատ հունձքի ժամանակ: Աւելացնենք այստեղ և այն հանգամանքը, որ Թիւրքիայում հողագործները առանց հարկ ժողովող պաշտօնեաների ներկայութեան՝ իրաւունք չ'ունին հունձը հաւաքել:

Այդ պատճառով չաճախ է պատահում, որ հողագործները հարկաւոր ժամանակին չեն կարողանում հունձը հաւաքել և կորցնում են իրանց բերքի մեծ մասը:

Վերև չիշեցինք, որ մասնաւոր հողերի վրայ ազատ տնօրէնութիւնը, այսինքն սոցա ազատ ծախելու իրաւունքը, սահմանափակւած է Թիւրքիայում ճաճիկ մասնաւոր հողատէրերի մէջ սովորութիւն կայ իրանց հողերի մի մասը նւիրել մզկիթին: Եւ երբ որ հողատէրը ցանկանում է իր հողը ծախել, նա հանդիպում է մեծամեծ խոչնդոտների մզկիթի կողմից, որովհետև մզկիթային հողերը ծախելու պայմանները բոլորովին ուրիշ են քան մասնաւորներինը: Մի այլ սահմանափակումն, որ վերաբերում է թիւրք և քրիստոնեայ հողատէրերի իրաւունքին, նրանումն է կայանում, որ օրէնքը վերապահում է գնելու իրաւունքը ծախւող հարևան հողատիրոջը, այսինքն ամենից առաջ ծախող հողատէրերի հարեւանները իրաւունք ունեն հող առնել, և ոչ այլ օտար առնողները:

Գալով տէրունական հողերին, պէտք է նկատած, որ սղքա կազմում են երկրի ամենամեծ մասը: Տէրունական հողերը ամենևին չեն անցնում օտարներին: Կալւածատիրութիւնը անընդունակ է գտնել սոցա մշակելու և կառավարելու: Բայց որպէս զի իր հողերը անմշակ և ապարդիւն չմնան, տէրութիւնը վաղուց ի վեր սկսել է նոցա իր պետական մեծ պաշտօնեաներին, նամանաւանդ զինւորական պաշտօնեաներին շնորհել: Հողերի շնորհումը մի սովորութիւն էր դառել և այսպէս ժամանակի ընթացքում Թիւրքիայում զարգացել է մի տեսակ անհատական կալւածատիրութիւն: Տէրութիւնը շնորհում էր իր հողերը մեծ պաշտօնեաներին երկու կերպ: Նա շնորհում էր իր հողերը կամ իբրև ազատ սեպհականութիւն կամ տալիս էր իրաւունք սեպհականութիւնից միայն արդիւնք վայելելու: Այս վերջին իրաւունքը կենսատև էր կամ կարող էր կտակել: Իբրև ազատ սեպհականութիւն տէրունական հողերը արւում էին շատ սակաւ և սոսկ այն դէպքերում, երբոր շնորհած հողը անմշակ էր մնացել կամ այդ հողի վրայ բնակւողների կողմից թողնւած էր և իմամի կողմից պատերազմից առաջ խոստացւած էր յաղթողներին: Սակայն այդ սեպհականութեան իրաւունքը սահմանափակւած էր այն պայմանով, որ շնորհւած հողը նոր սեպհականատիրոջ ձեռքում պէտք է անպատճառ մշակւի երեք տարւայ մէջ: Իսկ եթէ այդ ժամանակամիջոցում հողը անմշակ մնայ, իմամը իրաւունք ունի խլել այդ հողը և սալ ուրիշին:

Հողերի շնորհումը պաշտօնեաներին տէրութեան աչքում ունէր բացի տնտեսական նպատակից նաև քաղաքական նշանակութիւն։ Դրանով տէրութիւնը ձգտել էր ստեղծել մի զինւորական ազնւապետութիւն, որ նա համարել էր մի անհրաժեշտ դասակարգ իր նպատակներին ծառայեցնելու համար։ Բնական է, որ այսպէս ստեղծւած կալւածատէրերը անպատրաստ և անընդունակ լինելով հողագործութեան համար, տալիս էին իրանց հողերը մշակելու համար սոցա վրայ բնակւող շինականներին, որոնք հարկաւ յայտնի տուրքեր էին վճարում իրանց ազնւապետներին։ Իսկ սոքա պարտաւորում էին տէրութեան առաջ միայն զինւորական ծառայութիւն մատուցանելու։ Վայելելով այս օրինակ հողատիրական իրաւունքներ այդ կալւածատէրերը սկսեցին հետզհետէ ի չարը գործ դնել դոցա։ Հողատիրական իրաւունքների զեղծումները երևան էին գալիս ամենից շատ այն դէպքերում, երբ որ նոքա ծախսոտում էին շնորհած հողերը այլ և այլ տեսակ ձեռնարկու մարդկանց։ Հողերի վաճառումը այնքան յաճախացել էր, որ տէրութիւնը օրէնսդրական միջոցներին դիմեց այդ չարիքի դէմ մաքառելու համար։ 1858 թւին երևաց մի ընդհանուր օրէնք, որ նպատակ ունէր առհասարակ հողատիրական պայմանները կանոնաւորելու։ Աւատական հողերի վերաբերմամբ չիշեալ օրէնքը այն կարգադրութիւնն էր արել, որ ով այնուհետև աւատական հող է ձեռք բերում, նրան պէտք է առանձին իրաւունք տրւի (Պապու անւանւած իրաւունքով)։ Այս իրաւունքը ստանալու համար օրէնքը պահանջում է հող ձեռք բերողից 5⁰/₁₀ հողի արժէքից։ Նոյն օրէնքի հիման վրայ նախկին շինականները պարտաւորում են տարեկան տուրք վճարել ոչ իրանց աւատապետներին, այլ ուղղակի տէր ունական զանձարանին։ Աւատական հողերի ժառանգութեան պայմաններն էլ գտնւում էին անկարգ դրութեան մէջ և տեղիք էին տալիս զանազան զեղծումների։ Օրէնքով միայն աւատապետի հարազատ որդիքը կարող էին հողեր ժառանգել։ Իսկ այլի կանայք և ազգականները արտօնութիւն ունէին հանգուցեալ աւատապետի հողերը ուրիշներին շնորհել։ 1867 թւին լոյս տեսաւ մի օրէնք, որ պիտի բոլորովին վերացնէր այդ արտօնութիւնը և տարածէր հողերի ժառանգութիւնը ազգականների վրայ մինչ ութներորդ պորտը։ Այդ օրէնքը ուղում էր, որ

աւատական հողերը յաջորդաբար ժառանգեն և որ աւատական ընտանիքը այդ տեսակէտից շահ ունենայ իր հողերը անդադար խնամելու և մշակելու: Բայց նոյն օրէնքով սահմանաժամ են շատ մանրակրկիտ ձեւականութիւններ, որոնք վերաբերում են աւատական հողերի վաճառմանը և կապալառութեանը: Նամանաւանդ պահանջուում են շատ ձեւականութիւններ, երբոր գրաւատերերը ամուսնու են նշանակում աւատական հողերի համար: Այդ միջոցներով օրէնքը ցանկացել է, որ հողերը պարտքի տակ չընկնեն: Անչափահաս ժառանգների վերաբերութեամբ օրէնքը պարտաւորեցնում է խնամակալներին մինչ ժառանգների չափահասութեան հասնելը հողերը լաւ դրութեան մէջ պահպանել, ծախսելով այդ նպատակի համար շարժական ունեցածքից: Բայց եթէ ծախքը մուտքից աւելի է, խնամակալը իրաւունք ունի հողը ծախել տալ:

Այժմ դիմենք եկեղեցական կալաւածներին, որոնք երկրի $\frac{1}{3}$ են կազմում: Եկեղեցական կալաւածատիրութեան պայմանները մնացել նոյն դրութեան մէջ, որ գոյութիւն են ունեցել սրանից չորս հարիւր տարի առաջ: Եկեղեցական հողերը բաժանուում են երեք տեսակի: Առաջին տեսակին պատկանում են մզկիթների հողերը, որոնց արդիւնքները յատկացնում են լոկ կրօնական հիմնարկութիւններին: Մզկիթները ձեռք են բերել այս տեսակի կալաւածները այն հողերից, որ նոքա ստացել են աշխարհակալութիւններից յետոյ: Գարբրի ընթացքում այս կալաւածները չափազանց բազմացել են: Սոցա մէջ կան այնպիսիները, որոնց տարեկան արդիւնքը հասնում է 200,000 պիաստրից (ղրուշ) աւելի: Սրինակ սուրբ Սոփիա-Մզկիթը Պոլսում ունի եկամուտ տարեկան մէկ միլիօն պիաստր: Այս կալաւածների իրաւական պայմանների կանոնաւորութիւնը ենթակայ է եկեղեցական օրինադրքին (շերիաթին):

Երկրորդ կարգի եկեղեցական կալաւածները նոքա են, որոնք ծաւալում են հանրօգուտ նպատակներին, ինչպէս գրադարաններ, հիւանդանոցներ, բաղնիսներ և այլն: Այս կալաւածները ծագել են ուրեմն աւելի ժողովրդական կեանքի պահանջներից և կարիքներից: Քիւրքիայում պետութեան ձեռքով համարեա թէ ոչինչ չէ անուում աղքատների և հիւանդների խնամատարութեան և ժողովուրդի լուսաւորութեան համար: Այս երկրում տէրունական միջոցներով շատ

քիչ են կառուցանուած ճանապարհներ և կամուրջներ: Եւ այս պատճառով երկրորդ կարգի եկեղեցական կալւածները տալիս են մեծ օգուտներ: Հէնց սոցա շնորհիւ երեւցել են շատ ճանապարհների վրայ և քաղաքների փողոցներում և վանքերում ջրի աղբիւրներ: Միւս կողմից նոյն իսկ կրօնը պատւիրում է նոյնանման գործերին ձեռնարկել:

Վերջապէս երրորդ կարգի եկեղեցական հողերը կուլում են մասնաւոր կամ ընտանեկան եկեղեցական կալւածներ: Սոցա ծագումը և կազմակերպութիւնը բաւականին տարօրինակ են և ունեն բնորոշ պատճառներ, որւած լինելով ոչ կրօնական տեսակէտից, այլ այն դիտաւորութեամբ, որ այդ հողերը պահպանւեն ապահով դրութեան մէջ: Ուզենալով ազատ պահել իրանց հողերը տէրունական գրաւումներից, աճուրդից և ամեն տեսակ դատաստանական կամ վարչական միջամտութիւնից, մասնաւոր հողատէրերը աշխատում են իրանց հողերը մզկիթների հովանաւորութեան տակ զցել: Մզկիթը հանգիստնում է մի տեսակ հովանաւորող մասնաւոր հողերի և ունի նպատակ լոկ ընտանեկան հողային սեփականութեան օգուտները և շահերը պաշտպանելու: Պարզ է, որ հողերի նւիրատուութիւնը այստեղ չպիտի հասկանալ ընդունած սովորական մտքով, այլ նոցանպատակի համեմատ նւիրաբերած հողերը ազաւում են նաև հողային հարկից, որովհետև եկեղեցական կալւածները ըստ շերիաթի հարկ չեն վճարում: Նւիրողը թողնում է մզկիթին միայն մերկ սեփականութիւն (nudas proprietas) հողի վրայ, իսկ հողի օգուտների վայելումը վերապահում է իրան և իր ժառանգներին: Նւիրատուութեանը իրաւաբանական մի ձև տալու համար, մզկիթը գնահատում է նւիրաբերած հողի արժէքը և գնահատած գրամագլխի մի մասը տալիս է նւիրողին: Վերջինս էլ պարտաւորում է մզկիթին վճարել մի տարեկան տուրք, որ հաւասար է արգիւնքի 30/0:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, մզկիթի և նւիրողի մէջ կատարւում է մի տեսակ գրաւադրութիւն, որի համար կապւում է սոցա մէջ պայմանագիր: Պայմանագրում չիշած չեն ոչ գրամագլուխը և ոչ էլ սորա փոխ տւած մի մասը, այլ նւիրողից տրւելիք տարեկան տուրքը: Նւիրած հողի անժառանգ մնալու մասին պայմանագիրը կարող է օրոշել, որ այդպիսի հող ծախսելուց չետոյ ստացած ար-

դիւնքի մի մասը վճարւի նւիրողի կողմնակի ազգականներին: Նւիրողը կարող է իւր հողից օգտուելու իրաւունքը տալ երրորդ անձին: Բայց դորա համար նա պարտաւոր է մզկիթից թոյլտուութիւն ստանալ, որ և տրոււմ է նւիրողին, պահանջելով վերջինից մի յայտնի տուրք: Նւիրողից թոյլտուութիւն է պահանջոււմ և այն դէպքում, երբոր նա ուզոււմ է իւր հողը գրաւ. դնել կամ գրաւից ազատել:

Սա է կարճաբոստ պատկերը հողատիրութեան այն ձեւերի, որ այժմ գոյութիւն ունին Թիւրքիայում: Սակայն հողատիրութիւնը Թիւրքիայում ենթարկոււմ է մի շարք սահմանափակումների և դժուարութիւնների, որոնք մեծամեծ փնասներ են տալիս ժողովրդական տնտեսութեանը, միանգամայն անկարելի դարձնելով հողերի խելացի տնտեսութիւնը և մշակութիւնը: Նոյն իսկ պետութեանը ահապին փնասներ են հասնոււմ հողերի տիրապետութեան այսպիսի կազմակերպութիւնից: Այս սահմանափակումները վերաբերոււմ են նամանաւոր այն մասնաւոր հողատէրերին, որոնք տէրունական հողեր են ձեռք բերոււմ: Սոքա իրաւունք չունեն առանց տէրութեան թոյլտուութեան իրանց հողերի տնտեսութեան և մշակութեան ձեւերը մի որ և է փոփոխման ենթարկել: Եթէ, ինչպէս որ պատահոււմ է, սոցա հողերի վրայ զոնւող մրգի կամ այլ ծառերը պատկանոււմ են ուրիշ մարդկանց, այդ հողերը կարող են միայն վերջիններին ճախել: Իսկ եթէ նոյն այդ ծառերը պատկանոււմ են տէրութեան, հողատերը իրաւունք ունի միայն այդ ծառերի արդիւնքի վրայ: Տէրութիւնը ծախսոււմ է աճուրդով այս տեսակ հողեր, երբոր սոքա երեք տարի շարունակ անմշակ են: Բայց աչքի ընկնող սահմանափակումը նրանոււմ է կայանոււմ, որ Թիւրք հողատէրերի ազգականները, որոնք օտար կամ քրիստոնեաներ են, զրկոււմ են ժառանգութիւնից: Եւ զարմանալի է, որ բացի յիշած սահմանափակումներից զոյութիւն ունի նաև մի ուրիշ սահմանափակում որ հասարակական տէսակետից մեծ նշանակութիւն ունի և նոյն իսկ Եւրոպայում կալաճատիրութեան և կալաճների գրաւազրութեան խնդիրներու մի օր նշանաւոր գործնական դեր պիտի կատարի, թէև Եւրոպայում այսօր դրանով միայն տեսականապէս են զբաղւած: Դա այն խնդիրն է, որ վերաբերոււմ հողեր ծախելու և գրաւ դնելուն, որ շատ երկիրներում կատարոււմ է կամայականաբար: Այդ վերաբերու-

Թեամբ Թիւրքիայում հողատէրը իրաւունք չունի առանց վարչու-
թեան թոյլտուութեան իր հողը ծախել կամ գրաւ դնել: Իսկ եթէ
հողը գրաւ դրած է տէրունական թոյլտուութեամբ, վարկատուները
իրաւունք չունին դարձեալ առանց թոյլտուութեան հողեր աճուր-
դով ծախել տալու:

Իսկապէս ասած բոլոր տեսակ հողերը Թիւրքիայում կաշկանդ-
ւած և խճճւած են անթիւ աւելնորդ և անօգուտ կապանքներով,
որոնք դարերից ի վեր դիզւել են հողերի վրայ, շնորհիւ հնաւանդ
սովորութիւնների և կրօնական հասկացողութիւնների, բայց որոնք
միմեանց հակասում են և հողատիրութիւնը դարձնում են ամենա-
անհամակրելի և անտանելի հաստատութիւն: Մի քանի հասարակա-
կան տեսակէտներից չաճող օրինական պայմանները գտնւում են շղթա-
յակապւած այլ բազմաթիւ պայմանների հետ, որոնք խանգարում
և քայքայում են հողատիրութիւնը և խելացի անտեսութեան գործը,
հետեւաբար երկրի հողագործութիւնը:

Թիւրքաց տէրութիւնը քանիցս անգամ դիմել է օրէնսդրական
միջոցների այդ կարգերի դէմ մաքառելու: Բայց դոքա միայն
յայտարարւել են և ոչինչ գործադրութիւն չեն գտել, որովհետև
ժողովրդի կրօնական մոլեռանդութիւնը միշտ հակառակ է եղել
նորամուծութեանը: Տեսնենք թէ ինչու՞ն են կայացել այդ օրէնք-
ները: Նախ 1856 թ-ին հրատարակեցին երկու օրէնք, այս-
պէս կոչւած խատը գիււլանէ և խաթը հիււմայուն: Խատը
գիււլանէ օրէնքը ցանկանում էր իրաւունքների հաւա-
սարութիւն սահմանել քրիստոնեայ և մահմեդական հպատակների
մէջ: Իսկ խաթը հիււմայուն օրէնքը պէտք է տար օտարներին թոյլ-
տուութիւն թիւրքաց տէրութեան մէջ բնակւելու և խոստանում էր
պաշտպանութիւն: Եւրոպական տէրութիւնները 1867 թ-ին դրդեցին
Օսմանեան տէրութիւնը նոր օրէնքներ տալու հողատիրութեան մա-
սին, չնւեւելով 1856 թ-ին տւած խոստումների վրայ, որ անկատար
էին մնացել: Թիւրքաց տէրութիւնը իւր կողմից այդ ժամանակ
պահանջեց, որ իր և եւրոպական տէրութիւնների մէջ կապած դա-
շինքները Թիւրքիայում բնակւող եւրոպացիների մասին վերանան:
Սոքա այն դաշինքներն էին, որոնց հիման վրայ, ինչպէս յայտնի է,
եւրոպացիները չեն ենթարկւում Թիւրքաց իրաւասութեանը և

պաշտպանուում են որոշ ոստիկանական կանոններով: Այս պահանջին
 Եւրոպայի կողմից գոհացում չտրւեց և, շնայած դրան, Բ. Կուռը
 նոյն 1867 թւին դարձեալ երկու օրէնքներ հրատարակեց,
 որոնք վերաբերում էին տէրունական և եկեղեցական կալած-
 ներին: Այս վերջին օրէնքները ունէին զանազան նպատակներ:
 Նոր օրէնքներով հողային սեպհականութեան ժառանգութիւնը
 պէտք է անցնէր հողատիրոջ ազգականներին մինչ ութներորդ աստի-
 ճանը: Այս դէպքում ժառանգող ազգականը պէտք է վճարէր տէ-
 րութեանը իբրև տուրք 15⁰/₀ հողի արդիւնքից միանգամից կամ
 5 տարւայ ժամանակամիջոցում: Միաժամանակ այդ օրէնքները որո-
 շում էին գրաւարութեան կանոնները և նմանապէս կանոնաւորում
 էին այն տուրքը, որ վճարուում էր տէրութեանը հող ձեռք բերե-
 լու համար: Առանձին հետաքրքրելին այս օրէնքներում այն է, որ
 սոքա օտարներին իրաւունք էին տալիս Քիւրքիայում հողի սեպ-
 հականութիւն ձեռք բերելու:

Բոլոր այս օրէնքները չեն գործադրւել և մոռացութեան են
 տրւել զլխաւորապէս այն պատճառով, որ վտանգ է ծագել, թէ հեշ-
 տացներով հողերի ձեռքից ձեռք անցնելը, բոլոր հողերը հետզհետէ
 կարող են գտնւել օտարականների ձեռքում: Թէև այս վախը
 արդարացի է, սակայն նա կրել է աւելի կրօնական բնաւորութիւն,
 որ առհասարակ յասուկ է թիւրքաց հայեացքներին և խիստ խորն
 է թափանցել տաճկական բոլոր հաստատութիւնների մէջ:

Այսու ամենայնիւ թիւրքաց անտեսական դրութիւնը շարու-
 նակում էր մնալ աակաւին վատթար դրութեան մէջ: Տնտեսական
 սագնապը տարեցտարի սաստկանում էր և սպառնում էր
 երկրին սնանկութիւն: Միև կողմից տէրութիւնը մեծամեծ ծախ-
 սեր էր անում յատուկ իր պէտքերի համար և փողի մեծ պահանջ
 էր զգում եւրոպական վարկատուների պահանջներին բաւարարու-
 թիւն տալու համար: Բայց միևնոյն ժամանակ խնամք չէր տանում
 մուտքի նորանոր աղբիւրներ ձեռք բերելու: Պարզ է, որ երկրի
 պարքը վճարելու կարողութիւնը պակասելով՝ եւրոպական վարկա-
 տուների փողերը պէտք է կորչէին: Եւրոպական տէրութիւն-
 ները նախատեսում էին այդ անխուսափելի հետևանքը և աշխա-
 տում էին Քիւրքիան անտեսական անկումից փրկել: Դորա համար

սոքա անդադար պահանջում էին Թիւրքիայից, որ սա որոնի մուտքի նոր աղբիւրներ: Նոքա մասնացոյց էին անում եկեղեցական (մըղկիթների) հողերի վրայ, որոնք մեծամեծ մուտքեր պիտի տային: Պէտք է եկեղեցական հողերը չեա գնւէին: Եկեղեցական հողերը աշխարհական դարձնելով, այսինքն մասնաւոր սեպհականութիւն դարձնելով, սոքա կը վճարէին հողային հարկ, որից նոքա այժմս ազատ են, բայց որը տէրութեան զանձի համար մի ահազին դումար կը կազմէր: Պէտք է նաև որ մասնաւոր հողերը ազատւէին աւելորդ սահմանափակումներից, որոնք նւազեցնում էին երկրագործական արդիւնագործութիւնը և պէտք է առհասարակ զիւղատնտեսութիւնը, առևտուրը և արհեստները ազատւէին աւելնորդ հարկերից, որոնք խոչնդոտ էին լինում նոցա զարգացմանը և ծաւալմանը: Վերջապէս Եւրոպայի պահանջներից մինն էլ այն էր, որ Թիւրքաց տէրութիւնը իր հանքերը և անտառները կապալով տայ, որովհետև ինքը անկարող է նոցա շահագործելու:

Տաճիկ կառավարութիւնը հետևեց եւրոպական տէրութիւնների յայտնած պահանջներին և 1873 թւին հրատարակեց մի օրէնք, որ պիտի մոցնէր այդ բարեօրումները: Սակայն չիշած բարեօրումները մոցնելու համար հարկաւոր էր ժամանակ: Սոքա ենթադրում էին նաև վարչութեան կողմից լուսամտութիւն և խելացիութեան, որոնք միայն քաղաքակրթութեան շաւղով ընթացող երկիրների յատկութիւնն են:

Ով չէ զգում որքան լուրջ աշխատանք և եռանդ են հարկաւոր, որպէս զի այդ տեսակ վերանորոգումները մոցնեն հողատիրութեան կազմակերպութեան նկատմամբ: Քաղաքակիրթ երկիրների տնտեսական պատմութիւնը մեզ անդրդելի ապացոյց է, որ ինչքան հասարակային ընդհարումներ և շարժումներ տեղի են ունեցել, ինչքան գիտութիւն և քաղաքականութիւն են գործադրել մի նոր հողային կազմակերպութիւն սահմանելու համար: Թիւրքիային այս նախապատրաստական պայմանները պակասում են և հէնց այդ պատճառով մեծ մասամբ, չնայած տւած օրէնքներին, իրերի բարեօրման նշոյլ անգամ չէ նկատուում ցայժմ: Ի հարկէ քաղաքակրթութեան պահանջ է Թիւրքիայի տնտեսական և հասարակական յառաջադիմութիւնը տեսնելու: Այս նպատակին հասնել կարելի է ոչ միայն

տաճիկների նախաձեռնութեամբ և մինչև այժմ դործածած եւրոպական միջամտութեամբ, այն էլ սոսկ կապիտալիստ վարկատուների կամ այլ շահադիտական տեսակէտից: Այստեղ պահանջուում է միահամուռ նախաձեռնութիւն, որովհետեւ հողատիրութեան խնդիրը շատ մեծ և դժւար է: Պէտք է աչքի առաջ ունենալ եւրոպական փորձառութիւնը՝ այդ խնդրի վերաբերմամբ: Ամենքիւն գիւրին չէ վճռել թէ ինչ տեսակ սեպհականութեան ձեւեր պիտի ստանան եկեղեցական հողերը, որոնք յետ գնւելուց յետոյ՝ հարկաւ նորից բաշխուելու են: Յամենայն դէպս դժւար է հասնել հողային կազմակերպութեան խնդրի բարւոք և արդար լուծմանը, եթէ հողերը ստանային այն յատկութիւնները, որոնք հեշտացնում են հողերի սեպհականութեան գրաւ դնելը և ծախելը: Գուցէ յետ գնւելիք հողերը շարժականութիւն և ազատութիւն ստանալով՝ արդիւնաւէտ կերպով սնտեսւեն և մշակեն: Սակայն այդ օրինակ կազմակերպութեամբ նոր հողատէրերը կարող են այնպիսի դրութեան մէջ ընկնել, որի գոյութիւնը ցանկալի չէ: Արդարև հողային սեպհականութեան այն սպաւաններում հողատէրերը կը կարողանան իրանց հողերը ազատ կերպով գրաւ դնել զանազան պատճառներով: Յայտնի է, որ հողատէրերը իրանց հողերը պարտքի տակ ձգելով՝ դժւար են նոցա ազատում պարտքերից, այնպէս որ նոցա հողերը վերջ ի վերջոյ աճուրդով են ծախուում: Եւ ժամանակի ընթացքում հողատէրերը զրկուում են իրանց սեպհականութիւնից շնորհիւ. այն իրաւունքի, որ նոցա կատարեալ ազատութիւն է տալիս իրանց հողերի նկատմամբ: Այս տեսակ հողատիրութեան պայմանների հետեւանքը այն է, որ ամբողջ երկիրներ և երկրի մասերը զրկուում են իրանց նախկին հողատէր — բնակիչներից, որոնց հասարակական դրութիւնը աննախանձելի, անսխիթար և թշւառ է դառնում և ստեղծում է հասարակութեան համար ոչ ցանկալի պայմաններ: Ով որ ճանաչում է այս հասարակային — անտեսական հաստատութեան պատմութիւնը Եւրոպայում, նա դժւար կը ցանկայ, որ Քիւրքիայում յետգնւելիք հողերը այդ կերպարանք ստանան: Մենք սիրում ենք, որ հողատիրութիւնը Քիւրքիայում կարօտ է վերանորոգման, որովհետեւ նա սահմանաժամ է անարդար և ժամանակակից պահանջներին հակառակ հիմունքների վրայ: Բայց մենք նաև կարծում ենք, որ Քիւրքաց օրէնսդրութիւնը խոշոր և

վտանգաւոր սխալ արած կը լինի, եթէ նա օժտի հողատիրութիւնը այն իրաւունքներով, որոնք դարձնում են հողը առւտրի առարկայ և որոնք յատկացնում են հողին այն ընդունակութիւնները, որ բնականապէս կապիտալին են յատուկ: Նայել հողի վրայ շարժական կաշքի տեսակէտից, այս ինքն այն տեսակէտից, որ նա շատ արդիւնք տայ և հարկեր վճարի, դա միակողմանի և փնասակար հայեացք է: Սա այն հայեցակէտն է, որ ունեցել է ցաւալի հետեանքներ հասարակական տեսակէտից: Աէ որ այդ կազմակերպութեամբ հողերը Թիւրքիայում հեշտ կ'անցնեն ձեռքից ձեռք և մանաւանդ օտար կապիտալիստների ձեռքը: Ում չէ յայտնի, որ Թիւրքիայում քրիստոնեայ գիւղական ազգաբնակչութիւնը մեծ է, որը ապահով լինելով հողի կողմից նոյն քաղաքակրթիչ դերը կատարելու կոչումն ունի, որ սխալմամբ սպասուում է օտարներից, որոնք լոկ գիշակեր անտեսութեան շահերը աչքի առաջ կ'ունենան: Ուրեմն հողը պէտք է պատկանի մի երկրի հասարակութեան այն ամենամեծ դասակարգին, որ իւր հայեացքներով, աւանդութիւններով, բարք ու վարքով և իր բոլոր անտեսական և բարոյական էութեամբ կապւած է իր հարազատ հողի հետ: Եւ հողային վերանորոգման օրէնսդրութիւնը անշուշտ պարտաւոր է իր գործը յաւերժացնելու համար յենել գիւղական հարազատ ազգաբնակչութեան պահանջների և շահերի վրայ: Նա պարտաւոր է հողային պայմանները սահմանել երկրի հարազատ որդիերանց օգտին: